

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԱՄՎԵԼ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԱՄՈՒԷԼ ՄԱՐԿՈՍԵԱՆ, ՈՐ Ի ԲՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱՅ

Համայն հայութեան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ ու բարեպաշտ զաւակիդ:

Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ Արքեպիսկոպոս Մուրադեանից զոհունակութեամբ տեղեկացանք, որ իբրեւ բարի եւ նախանձաւոր մշակ՝ երկար տարիներ Դուք աստուածահաճոյ Ձեր կեանքը արդիւնաւորել էք բարի վաստակով՝ լինելով նուիրեալ անդամը Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Արգենտինայի հայոց թեմի Կենտրոնական Վարչութեան: Առանձնակի գնահատանքով ենք անդրադառնում մեր Եկեղեցուն եւ ազգիս հայոց Ձեր մատուցած մեծ ծառայութիւններին: Ի սէր առաքելահաստատ Մայր Եկեղեցու լոյս առաքելութեան եւ ազգային մեր կեանքի շինութեան, մեր երեխաներին հայրենեաց ժառանգութեամբ կրթելու ճշմարիտ գիտակցութեամբ Դուք շարունակում էք ազնիւ բարերարութիւններով հովանաւորել Բուէնոս Այրէսի հայկական դպրոցներին: Ձեր եւ Ձեր ընտանեաց անդամների ազնիւ խնամքով պահպանուում է Լիւիէրս թաղամասի Սուրբ Պօղոս մատուռը, որի աղօթաբոյր հարկի տակ մատուցուող Սուրբ Պատարագներով մեր ժողովրդի զաւակները հաղորդուում են Աստուծոյ հետ եւ նորոգում հաւատի իրենց ոգեղը առ Հայրենին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Անուազ ջերմե-

ռանդութեամբ ազգային մեր կեանքի, մասնաւորաբար՝ Արգենտինայի հայոց թեմի շինութեանն ու պայծառութեանը ուղղուած Ձեր ջանքերը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ մշտավառ Ձեր սէրն ու հաւատարմութիւնը Օրհնութեան Կոնդակով արժանիօրէն գնահատել է Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ Դուք Ձեր ազնիւ աւանդն էք ներդնում նաեւ Մայր Հայրենիքի վերաշինութեան գործում՝ լինելով հիմնադիր անդամ Բուէնոս Այրէսի «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի: Մեր Մայր Հայրենիքը պայծառ ու շէն տեսնելու փափագով Դուք մասնակից էք Հայաստանի զարգացման ծրագրերին: Ձեր սրտաբուխ նուիրատուութեանց շնորհիւ նորոգուել են Երեւանի մանկական հիւանդանոցի վիրաբուժական բաժինն ու շէնքը, իսկ հիւանդանոցը լիարժէքօրէն ապահովուել է սարքաւորումներով:

Մեծարգոյ Տիար Մարկոսեան, մեր Եկեղեցուն եւ ժողովրդին բերած տարիների Ձեր բոլորանուէր ծառայութեանց եւ բազմարդիւն վաստակի բարձր գնահատանքով, ընդառաջ Արգենտինայի հայոց թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադեանի ազնիւ խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Իշման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն է, որ Բարերար Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով ազգաշէն ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի երկար տարիներ ու ամենայն բարիք:

Թող Տէրը միշտ պայծառ պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Արգենտինայի հայոց թեմը:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենասեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29-ն Ապրիլի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 228